

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են միմյանի կարգադրանքները:

Օտարաբարձրացիք դիմում են ուղղակի *Typhus, Pedicularis „Mucosa“*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տոն օրերից):

Տպարարութիւնը ընդունվում է ամէն շաբաթ:

Տպարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Չենք հաւատում: Ներքին տեսութիւնը չի բերում: Արտաքին տեսութիւնը ճիշտնապէս: Նամակ Պարսկաստանից: Խառն լուրեր: Մշակիչ ներառիչներ: Յայտարարութիւններ: Տեղեկացոյց: Բանասիրական: Նամակ Թիֆլիսից:

ԶԵՆԲ ԿԱՒԱՏՈՒՄ

II

Հայաստանը բարեօրէնք և հայոց ազգը կրթելու համար հարկաւոր է, ինչպէս ամէն երկրին և ամէն ազգութեան բազմակողմանի և բազազրեալ և ոչ թէ միատեսակ և միակողմանի աշխատանք: Թիւրքիայի հայը տղէտ է, տուեցէք նրան ուսում: Կա արկացած և վախկոտ է, նրան հարկաւոր է մարմնամարտութիւն և զինավարժութիւն: Հայաստանը չէ կարող վաճառահանել իր ընական արդիւնքները: այդ երկրին հարկաւոր են ճանապարհներ:

և այն: Երկրի երկրագործութիւնը և արհեստները ընկած դրութեան մէջ են, նրանց հարկաւոր է ծաղիկեցնել: Իսկ կը լինէր աշխատանքի բաժանութիւն, եթէ իւրաքանչիւր ցաւ տեսնելով ազգի և երկրի մէջ դորան համեմատ, դորան դարման անելու նպատակով կը հիմնվէր այս կամ այն ընկերութիւն: Ուրիշ հարց է արդեօք կարող է ազգի կամ երկրի ներկայ դրութեանը նայելով աշուղել այս կամ այն ընկերութիւն:

Իսկ կարծում էք որ հայոց ազգը տղէտ է, հիմնեցէք մի ընկերութիւն, որի նպատակը կը լինի Հայաստանի մէջ ուսում տարածելու: Իսկ համոզվել էք որ թիւրքաց հայերը մարմնով թող և հողով վախկոտ են, հիմնեցէք մարմնամարզական և զինավարժական ընկերութիւններ: Իսկ հասկացել էք որ Հայաստանին հարկաւոր են ճանապարհներ:

ներ, հիմնեցէք ճանապարհներ և երկաթուղիներ շինելու ընկերութիւն: Իսկ համոզված էք որ Հայաստանի մէջ կարող է աշուղել երկրագործական դպրոց: հիմնեցէք մի ընկերութիւն, որի նպատակը կը լինի իրագործել այդ տեսակ դպրոց և այն: Բայց ինչ է, ք միմեանց խանգարում, վրնասում ձեր գործունէութիւնների մէջ, ի՞նչ ձեր ոյժերը ցրվում անթիւ միանման և միանպատակ ընկերութիւններ հիմնելով:

Թիւրքիայի հայերը մեզ կը պատասխանեն որ հիմնված ընկերութիւններից իւրաքանչիւրը ունի իր գործունէութեան առանձին շրջանը՝ մինը գործելու է Ասպուրականի մէջ, միւսը Կիլիկիայում, երրորդը Լըզորում, ուրեմն դա էլ աշխատանքի բաժանութիւն է...

Բայց դրանք ապարդիւն ջանքեր են, քանի որ ընկերութիւնների նպատակը միանման լինելով, նրանց բոլորի ոյժերը կարելի էր

ամբողջել մի կենտրոնական ընկերութեան մէջ, որ ժամանակով հաստատ հիմք ստանալով խոր արմատներ գցելով, կարող էր հետոցհետ ունենալ Հայաստանի սյլ և այլ նահանգներում իր բաժինները:

Վերջապէս հայոց ազգը ոչ այնքան նիւթական ոյժ ունի, ոչ էլ այնքան եռանդ և ազգասիրութիւն ունի որ միաժամանակ խրնամք տանի այդքան բազմաթիւ, թէ կուզ անհրաժեշտ ընկերութիւնների մասին:

Մենք չունենք նմանապէս այնքան մարդիկ, այնքան առաջնորդներ, որոնք կարող էին բաւական լինել այդքան բազմաթիւ ընկերութիւնների վարչութիւնները կազմելու: Իսկ զո՞հ պէտք է լինենք, եթէ մի երկու ընկերութիւններ կարողացան կազմել իրանց վարչութիւնները ազգի փոքր ի շատ խելացի և կշիռ ունեցող անդամներից:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՍՍԱ ԹԻՒՐԿՈՒՅԻՏ

Կ. Պոլիս, 3 սեպտ. 79

Իմ կարծիքով ձեզ շատ հետաքրքրական պէտք է լինի որ և է առաւել որոյ առաւելայք են հայ ազգին հետ կենսական տարբերը: Ընդհանր այս պատճառով թուրք տարին իմ այս անդամուայ յորտածին: Եւ իրօք, ինչ կայ աւելի կարեւոր քան ճանաչել այն դրացի մտղութեանը որոց հետ կը բնակվիք, որոց հետ կապվիք, և որոց բախտին կապած է մեր բախտը: Եթէ բանն է որ մեր աւօրեայ կենսական մէջ շարունակ կընենք: Միթէ, որ և է անձի հետ գործ ընելէ յառաջ, ջանասար չենք լինիր նրա ընտանոթութիւնները ճանչել, նորա գաղափարներն իմանալ, նորա նիւթական, բնասական, ընկերական միջակին տեղեկանալ, որպէս զի, ըստ այնմ, նորա հետ խօսենք, վարուենք և դաշնադրենք:

Մեր ազգին դործը միայն մէկ հատի հետ չէ, այլ դժբաղդաբար շատերուն հետ: Իր մօտ, իր սիրելի բարեւոյժի հետ: Կարող ենք, թուրքը, ուսուց, յոյնը, վրացին և այլն, դրացիներ, որոնք ամենն ալ շատ հասկնի չեն, և որոց իւրաքանչիւրը զմեզ կը ստիպէ ունենալ վարժանքի տարբեր տարբեր ձևեր: Սոցա մէջ կարեւորագոյններն են թուրքը և ռուսը: Այս վերջինը սերունդ և ընդհանրութեան ծանօթացնել կը պատկանի ձեզ ուսաստացող, իսկ առաւելին ընտելութիւնը, աւելի պատշաճութեամբ, միայն մեզ: Անտարակոց թէ շատ մեղադարտ ենք այն բանին համար որ այս փոխադարձ ծանօթութիւնը մէկ մէկու աւելի կանուխ մտաուցանել չը ձեռնարկեցինք, քանի որ, եթէ գործնական մարդիկ ենք, պէտք է լինէր բոլորեմ վաղուց թէ վերին աստիճանի կարեւոր է որ ազգին ընդհանրութիւնը տեղեկ լինի այս գլխաւոր դրացի ազգաց կացու-

թեան, որպէս զի իր բռնկիւք քաղաքական ընթացքն համաձայն գտնուի ազգին հանրական շահերուն: Մինչև վերջի տուններս, փոքր ինչ ճակատագրականաց պէս ապրեցանք, վստահ ամեն օրուայ պատահած դէպքերուն, մեր առաջատաները բացուած կը բռնէինք ամեն փշոջ հողմին դէմ: Չէինք գիտէր և տակաւին չը գիտենք ինչ խոչ և խոթեր կան այն ծովուն մէջ, որու վրա ազգին նաւակը ստիպուել ենք ղեկավարել: Վերջին պատերազմական դէպքերը մեզ մի բուռն ցնցում տուին և մեր, սարսափած, տեսանք թէ ազգն անցատակ մի խորթորատի եղին անող և անող պատկած կը ներհէր դարեւոր մի քնով, տեսանք թէ բաւ էր որ թշնամոյ մէջը մեզ մի կից տար իր ոտքով, և ահա թաւաղուր պիտի հոռէինք վէճն խորը: Աստուած գիտէ մէկն արդեօք ձեռք պիտի կարկուէր այն մահուան փոսէն զմեզ վեր հանելու: Այդ վտանգէն, լոկ սարսափայց բերմամբն ազատած, այժմ զգաստանալք, բարբաղի ամեն ոք մի շրջանկատ նայուած թող դարձնէ և ջանայ ընել և տեսնել թէ ինչ է ազգին վիճակը և ինչ կը խոտանայ լինել, աւելի վտանգ Թէ աւելի լաւ: Այս, ոմանք այնպէս կարծեցին տեսնել թէ երջանկութիւնն երկրի բարձունքն վար իջնելով պիտի գար այսուհետեւ բնակիլ Հայաստանի գաւառին մէջ, ոմանք ալ թէ ազգն կուզ պիտի երթայ մի նոր և աւելի ծարավի թշնամի որ հեռուէն դաւով նորա վրայ պիտի տրեպակէր: Մինչև ցարդ գտնուց այդ ոսկեղենի անուրջներն և ոչ այդ անարկու մարգարեութիւնը իրականութիւն չը գտան: Հայոց ազգը կը շարունակէ ապրել Հայաստանի մէջ, ինչպէս յառաջ, բայց վիճակով, աւելի վատթար և աւելի յուսահատ: Ելել ժամանակ չէ որ արտասահմաններէ գալիք օգնութեանց վրայ մեր ամեն յոյսերը չը դնելով, հարեւի երկրին վրայ ապրող օտար տարրերուն պակասութիւններէն օգուտ բաղելու աշխատենք, և այս բանին համար, պէտք է անշուշտ հետազոտել թէ տակաւին երկար հայերը թրքերուն հետ պիտի կենակցեն թէ այս մրցող երկու տարրերն ինչ յաղթանակ տանել կը խոտանայ և որը վերջապէս ջնջուելու տեղի տարու հաւանականութիւններ կը ցցունէ: Յայտնի բան է թէ յետին ծայր շահեկան է մեզ ամեն այս հարց-

բուն պատասխան գտնել, որ ուրիշ կերպիւ չը կրնար լինել, բայց եթէ թուրք տարրը նորագոյնն մի քնննութիւնէ անցնելով, այնպէս որ այդ տարրը մեր աչքին առջև դնենք, շօշախենք կազմուածքը, չար փենք իր կարողութիւնները, ի վեր հանենք իր տկարութիւններն ու ախտերը և մեր ստանալիք այս փորձառական տեղեկութեանց վրա հիմնուելով, որուն ինչ պարտի լինել մեր ընթացքը թրքերին հետ և ինչ տրուած է մեզ յուսալ հաստատու պէս: Գործ արդարեւ շատ դժուարին, որ կը պահանջէ ներհոս միտք ունենալ և բարակ ու նորը տեսութիւն: Եւ անուշապ այս նիւթին վրա մի մեծ լան չեմ կարող ըսել, բայց որքան որ սակաւ և կողմնակի, իմ առջիկ տեղեկութիւններս, յոյսով եմ թէ փոքր ինչ լոյս պիտի թափեն այդ նիւթին վրա, որոյ մանրամասն ընտելութիւն կը թողում աւելի արժանաւոր և փորձառու անձանց խնամքներին:

Թուրքը ոչ միայն Տաճկաստանի զանազան ցեղերուն մէջ, այլ և բոլոր լուսաւորեալ աշխարհին մէջ խիստ հետաքրքրական և բացարձակ տիպար մէ, ու թէ կազմուածքի մասին, այլ բոլորին կողմէն: Երևում էր, ընդհանրապէս գեղեցիկ է, և մի շատ բանաստեղծներ թուրք ցեղին մէջ կը սիրեն որոնել իրէպական գեղեցիկութիւնները: Ամենքին նախանձը գրգռող առողջութիւն մը կը վայելէ թուրքը գրեթէ միշտ, բայց իր նկատմամբ չենք կրնար ըսել թէ ճշմարիտ է հին իմաստնայ մը խօսքը թէ օտոռոջ մարմնի մէջ առողջ միտք կը բնակի: Այսպիսի այս տարրը գուրկ է հզոր ազգային յատկութիւնների որ օտարական մը, Տաճկաստանի հողին վրա կը ստը կը դնէ, կը նշարէ թուրք երեխաներ, թուրք տղամարդներ, թուրք պաշտօնեայներ, թուրք կիներ, վերջապէս մի շատ թուրք բաներ, բայց այդ թրքիոյ մէջ թուրք ազգ մը չը տեսնէր: Այս մի արտաքին երեւոյթ է թէ ոչ ներքնապէս ալ այդպէս կազմուած է: Երբքը, դուրքը, բոլոր մէկ է: Կա արտաքինապէս ինչպէս որ իբր ազգ չը ներկայիլ, այնպէս ալ ներքնապէս իբր ազգ չէ կազմուած, չէ հաստատուած: Վաղուց արդէն ըսել են թէ աշխարհիս վրա թուրք կառավարութիւն կայ, բայց թուրք ազգայնութիւն չը կայ: Կը լինի թէ

1872-ին հայասէր մի խումարի Կ. Պոլիսէն Հոռով գնալով մի շարժաթերթ կը հրատարակէր «զաղղիէրէն և խոսքերէն լիզուներով», որոց նպատակ ընտրած էր զԵրօստան հանդէս թէ թուրք տարրին վրա ունեցած կարծիքը սխալ է, չը կայ թուրք ազգ Տաճկաստանի մէջ և չը պէտք է նորա կենսունակութեան հաւատար: Այս փաստը, ամեն ժամանակի աւելի, այժմ պէտք է պայծառ փայլի, և ամեն ժամանակի աւելի, այժմ կրնանք առանց տարակուսի ըսել թէ թուրք տարրը չունի ազգայնութեան և ոչ իսկ ազատ նշանակ մը, տկար ստուեր մը: Սակայն եւրոպացիներ կան որք հաւանակը կը պնդեն, և ամենայն լրտեսներն երկարօրէն կը փաստաբանեն թրքին ազգային ճանաչարձիկ յատկութեանց վրա և հանդիսապէս ալ կեզրակացնեն թէ թուրքն, որպիսի որ տղէտ, որպիսի որ բարբարոս, որպիսի որ յետադէմ, նորէն ազգ կուշուր արժանի միայն թուրք տարրը կայ թրքիոյ մէջ: Այս տարապայման ստիճանականութեան վրա պէտք է զարմանալ: Գործնական այդ եւրոպացիներն, որոց զոր կը պահանջէ չը յառաջանել բրիտանական փոքրիկ ազգերն, որոց չարք կը պահանջէ թուրք տարրին ձեռքին մէջ պահել տալ Արեւիկի վարչութիւնը, այդ եւրոպացիք, կըսեն, չեն դադարիլ յերկրի բարբարոցն թրքութիւնը, վասն զի տեսնը են որ թուրք գիտարներն, արեւծի պէս գիտեն հազարներով թուրք նամուոյ սրոյն առջև նետուիլ, մտնել, շարժաթիլ լիպպայի ապաստաններուն դէմ: Պէտք է հարցնել այդ եւրոպացիք թէ ինչ արժէք ունի իմարաբար երթալ կոտորիլ, երբ այդ գիւցազնութեան շարժաթիլն ոչ թէ ազգութեան վտանգ ազգային է, այլ կրօնամոլութիւնը, գեալուրին դէմ գզացուած անհաշտ ատելութիւն մը: Եւ յետոյ, ազգի մը մեծ յատկութիւն ոչ թէ մեռնելու համար ունեցած դիւրին հակումն մէջ կը կայանայ, այլ խաղաղութեան ժամանակ յառաջանալու, կրթուելու, զարգանալու հակումն մէջ: Ամենիկոյ վայրենիներն ալ մահու պատերազմիկ են, և իրենց պարսագլին մէկ նշանն իրա, նիզակ, նետ և ազգ ձեռն, թշնամոյն վրա կարաւին: Եւ ով համարձակած է ըսել, կարմիր մորթերը պատերազմիկ են, ուրեմն նորա ազգութեան ամեն յատկութիւն-

Գիտութիւնք մենք ճանաչում ենք
 Կ. Պօլսի մի ընկերութեան վարչութեան անդամներին, պարզ տեսնում ենք, որ այդ վարչութեան մէջ ամբողջովն են գրեթէ այն բոլոր ոյժերը որ ունի Կ. Պօլսը, նրա մէջ միացած է Կ. Պօլսի հայոց ամբողջ ինտելիգենցիան, համոզված ենք որ այդ փոքրիկ շրջանից դուրս գրեթէ ոչ մի հասարակական գործող յայտնի անձն չը կայ: Ինչպիսիք սորանից այդ ընկերութիւնը վայելում է պատրիարքի հովանաւորութիւնը, իր վրա օտար պետութիւնների դեսպանների ուշադրութիւն է դարձրել: Մենք յարգում ենք այդ ընկերութիւնը և հաւատ ենք ընծայում նրան: Հանկարծ հիմնվում է մի երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ ընկերութիւն... Սրանց վարչութեան անդամները ո՞վքեր են, թերահաւատութեամբ հարցնում ենք մենք, արդեօք նոյնպէս հաւատարմութեան արժանի մարդիկ են, միթէ նրանք էլ վայելում են պատրիարքի հովանաւորութիւնը... Միթէ այսքան տարիներ ընած, թմրած, անգործ և անտարբեր մնացած Կ. Պօլսում միանգամից յայտնվեցան այդքան շատ հասարակական գործողներ...

ինչպէս անձրեւից յետոյ բուննող անպէտք սունկերի վրա: Ահամայ մի քանիսնների մէջ ծնվում է գուցէ յանցաւոր կասկած թէ այդ ընկերութիւնների մեծ մասը ոչինչ ազդեցութիւն չունեն, թէ նրանք միայն դրամական սպեկուլացիան են, աւելի ոչինչ իսկ նրանց վարչութիւնները բաղկացած են միմիայն աֆէրիստներէից... Իսկ երբ այդ տեսակ կասկած մտել է ամբողջի մէջ, դժուար է նրան համոզել թէ այդ այդպէս չէ: Արջաջնում ենք այս անգամ մեր խօսքը ասելով թէ մենք չենք հաւատում որ այդքան բազմաթիւ ընկերութիւններ կարող են զուգընթացաբար գոյութիւն ունենալ թիւրքիայի հայերի մէջ և մի բարի խորհուրդ կը տային նրանց ամենքին: Արդ՛հետեւ նրանց բոլորի նպատակը մի է, — թող բոլորն էլ միանան մի ընկերութեան մէջ, որով այդ ընկերութիւնը աւելի մեծ ոյժ կը ստանար, նրա գործունէութիւնը աւելի կենտրոնացած կը լինէր, նա աւելի մեծ հաւատարմութիւն կը վայելէր ազգի կողմից և աւելի էլ առատ նուէրներ կը ստանար: Մենք միշտ կը շարունակենք համակրել «Արարատեան» ընկերութեանը, կը շարունակենք հա-

ւարել փողեր և համոզել հայ հասարակութեան փողեր նուիրել բայց կրկնում ենք որ այդ տեսակ ընկերութեան ապագայ գոյութեան անհրաժեշտ պայմանը տեսնում ենք ուրիշ, նրան միանման ընկերութիւնների հետ միանալու մէջ, և այդ միանալը ոչ թէ միայն «Արարատեան» ընկերութեանց յետոյ հիմնված ընկերութիւնների հետ պէտք է կատարվի, բայց և նրանից առաջ հիմնված «Իրարոցասիրաց» ընկերութեան հետ, որ ինքն իր կողմից միացած է արդէն «Արեւելեանի» հետ: Իսկ մեզ համար մի և նոյն է թէ միացած ընկերութիւններից կազմված նոր ընկերութիւնը ինչ անուն կը կրի՝ «Արարատեան», «Իրարոցասիրաց», «Մասիսեան» թէ «Հայկական»: Մենք այնուամենայնիւ միշտ կը համակրենք և կօղնենք այդ տեսակ ընկերութեան: Միւս անգամ մենք կը նայենք գործի վրա և մի ուրիշ տեսակէտից: Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ
 Պ. Միքայէլ ՏԵՐ-Միքայէլեանից ստացել էինք Ա. ՔԱՍՏՈՒՄՍԿԻ մէջ հաւաքած 116 ր. 50 կ. յոգուտ

ներն ունին, իբր ազգ ապրելու: Բազումի և մէջքի ուժը խելքի նշանակ չէ: Բայց այս տեսակէտէն թուրքը ընկնելն մարտութիւն մ'է, պէտք է զինքն առնուլ իր տղայ հասակէն և հետեւ իրեն իր ամբողջ կենաց պայմաններուն մէջ իր իմացականութեան ինչպէս փթթիլը անսնելու համար: Ես, կանուխ ժամանակէս, թրքերին հետ միշտ գտնուած եմ, և իմ երկար կենակցութիւնս անոնց հետ ներսից ինձ ճշգրիտ մի գաղափար ունենայ թուրք էակին մտաւորական արժէքին վրա: Ահաք է ընդունել թէ ընտելութիւն որ ուրիշ ազգաց նկատմամբ այնպիսի աւատամտեմունտ երկեցի է, թրքաց համար չաա ժառ և շատ ազա՛հ հանդիսացի է, այնպէս որ ինչ ձիւրքեր ու յատկութիւններ որ հայը, յոյնը, և եւրոպացին ստացեր է, թրքերն այդ բաւ բաներէն զրկուա են: Ի միջի հայոցի մէջ, որին անկ բերեմ ուր, ինչպէս յստակ մէկ հայելիի մէջ, պիտի տեսնէք այս ճշմարտութիւնը: Երբ որ բուսանողը Նափուէնք գ. կը ձգտէր բոլոր թիւրքեան ճրանկընել, Պօլսոյ մէջ մի կայսերական վարժարան կը հիմնուի, գաղղիական լիսէններուն բնակին վրա, որ ինչպէս գիտէք բարձրագոյն հաստատութեանց առաջին աստիճանն է, փարիզէն կը բերուի իբր տեսուչ իր գիտութեամբ և փորձառութեամբ, երկեւի մի անձ, պ. Լընէսթեթը Սալլի, որ այսօր Ամբիւրայ վարժարանաց ընդհանուր տեսուչ է: Թրքից ամեն մէկ ազգաբնակչութիւնը կուզարկէ այդ վարժարանը իր մէկ նշանին, որպէս էշանթիցոնը, — այնպէս որ մէկ հասարակի վրա հնար էր գտնել հայ, յոյն, պուլղար, թուրք, հրէայ, գաղղիացի և այլն, որոյմէ ամեն մին ալ տարբեր տարբեր նահանգներէ եկած էր: Այլ բայա, այս ամեն այլատես ազգերը վարժարանի ուսանող հարցին մէջ հայելով, կը յուսար մի նոր նիւթ ձուլել և դուրս բերել, այն է օսմանկան ազգ մը: Մինչդեռ նա իր այս անուշ երազով կը սուրբորէր, քրիստոնէայք ալ որ ըստ օրէ աւելի կը ճեւանային թրքերին, փոխանակ մասնաւոր, և շատ ժամանակ չանցնա, այս հեռաւորութեան փոխանակեցին մի յայտնի արձամարձակ, մի խորին գգուանք դէպի թրքութիւն, և պ. Տը Սալլ չէր կրնար բժշկանել թէ ինչպէս թուրք աշակերտ-

ները, մի և նոյն դաստուի ձեռքին տակ, մի և նոյն ուղղութեան մէջ, անկարող կը մնան յառաջադիմուող, կրթութեւ, լուսաւորութեւ ինչպէս քրիստոնէայք կը ընեն: Իրարանչիւր ազգ իր յատկ ընդունակութիւնները կը ցցուեն: Մին մաթեմատիկայի, միւսը գրականութեան, երրորդ մը ընկալն գիտութեան, թուրք աշակերտը միայն անտարբեր և անընդունակ կը մնար դէպի ամեն գիտութիւն: Պ. Տը Սալլ երկար տարիներէ ետե իր հայրենիք վերադարձաւ առանց թուրք աշակերտի մը միջադիր (տրեքմա) առնելը տեսնելու: Բարձր մաթիւ հայեր, յոյներ, պուլղարներ ընթացքին աւարտելով պատկուած դուրս ելան, բայց թուրք մը չը տեսնուեցաւ որ մարտաբանից ամեն դասերէն անցնելով մինչև վերջինը կարողանար հասնել ինչպէս պէտք է բացատրել այս երևոյթը, որ խիստ զարմանալի է, և շատ գաղտնիքներ բացատրող: Փոխանակ նրկութեան պատերազմի դաշտին վերայ թիւրք տարբը ընկելու, եթէ Եւրոպացիք գալին այդ բանն ընել այդ բարոյական և մտաւոր կրթիւնի մէջ, ինչ պատրաստներ պիտի գտնէին արդիօք թրքաց ստորնութիւնը ծածկելու համար: Ըստ իմ կարծեաց վարժարաններն են այն միակ վայրերն, որոց մէջ հնար է ճշգրիտ կերպիւ բաղդատել այլ և այլ ազգերը: Եւ կը ինչդեմ դիտել որ թուրք աշակերտներու ստորնութիւնն իրենց հարստութեան և կամ ընտանեկան վատ հանգամանաց չենք կրնար վերաբերել: Փաշայի որդիք, այս, թոյլ, անձոք, բթամիտ էին, և խիստ անտարբեր դէպի գիտութիւն, բայց հարուստի որդիք, դժբաղդաբար, ամեն երկրի մէջ մի և նոյն տնուր տեսարանը կը ներկայացնեն, բացի մի շատ սքիւիւ բացառութիւններէ: Առտուած իրենց համար ստեղծած է Գաղղիոյ մէջ բոլորի և շանդանիայի գիւնին, Թիֆլիզու մէջ կախելու գիւնին, և Թրքիոյ մէջ ալ օղին և բիւլուը: Անոնց համար կապրեն գեղեցիկ արարածները, անոնց համար կը պատրաստուին համեղ կերակուրները, բայց ոչ, իմ խօսքս այդ յոյժացեալ էակներուն վերայ չէ, այլ այն ազգաւ թրքին, որ պուլղար և հայ զիւղացոյն պէս իր անակնը վտարանէն փոխադրուած է այդ վարժարանին մէջ, ու հայ և պուլղար աշակերտին հետ ի միասին մի և նոյն դասադրերը կը

գործածէ, մի և նոյն դասերը կը լսէ: Ի՞նչու, մի և նոյն պայմաններին մէջ, երբ հայն ու յոյնը կը ուսանին, կը դարձանա, կը լաւանան, թուրքը բան չուսանիր, բիրտ ու կոպիտ իր անէն եկած էր, բիրտ ու կոպիտ անդ կը վերադառնայ — դասատուին խօսքերը զլինջ վերեւէն իրբն մի հողմ կանցնին, դասադրերը ձեռաց մէջ իբր անմեկ նեկի տառեր կը մնան: Հին խօսք մ'է թէ Ալմեսարարին Աստուած ամեն մարդը հաւատարմութեւ բաշխեց իմացականութիւնը և թողուց որ իւրաքանչիւրը ջանայ այդ աստուածային պարգէնէն ամենամեծ օգուտները քաղել: Ես աւելի կը հակիմ բնագէտներու կողմը որք կը քարոզեն թէ ամեն տեսակ կենդանի, առտն լինի թէ անասուն, իր յատուկ կազմուածքն ունի, որմէ կախեալ է նորա խելքին քանակ ու թիւնը: Ամեն ոք համոզուած է թէ Ափրիկէի սեւաւարները կամ իւսիպիները երբէք չը պիտի զարգանան եւրոպացոց պէս — ամեն ոք զիտէ որ Աւստրալիայի մարդներն, Եւրոպա բերվելով կրթութիւն կառնու և երբ իր երկիր կը դնայ իր ցեղին բարբարոս և վայրենի բարուց կը վերադառնայ, Գանի քանի թուրքեր երկար տարիներ փարիզ բնակելէն ետե երբ հայրենիք եկած են, աւելի թուրք եղեր են քան թէ յուսալ — հասկանալի է այս երևոյթը, զի այդ քաղաքակրթութիւնը ինչպէս Աւստրալիայի վայրենիքն այնպէս Պօլսոյ թրքքին անբնական մը վիճակ էր, որու հետ չէր կրնար համեմայն մնալ: Այս փորձառական գիտելաց վրայ հիմնուելով, և ես այսպէս պէս պիտի բանմ թէ թրքին բնական բաղադրութեան (composition) մէջ թրքութիւն մը կայ — հարկաւոր նիւթ մը պէտք է պակաս լինի — և անա այս պատճառաւ, մտքի և խելքի մասին, հասարակ կէտ մը չունի յառաջադէմ ազգաց հետ: Թրքաց վերայ քննադատութիւն աւելի կծու կը դառնայ երբ անոնց ազգութիւն ինչպիսի կը լինի: Երեւակայեցէք թէ ապիկար քննադատներ բաղկացեալ մի ազգ ինչ ողորմելի տեսարան մը կը ներկայէ, երեւակայեցէք թէ ինչպիսի կենսք մը կրնայ վարել զա, երբ մասնաւոր, իբր աւերութիւն և տրեղ մի ազգ ապրելու համար հարկ եղած ամեն ծանրութիւնները իրեն վերայ կը բեռնաւորուին: Տաճ-

«Արարատեան», «Իրարոցասիրաց» — Արեւելեան և Ափրիկեան ընկերութիւնները: Այդ գումարը 3/3 բաժինը, 77 ր. 67 կ. ուղարկեցինք «Մեղուի» խմբագրութեանը, իսկ մնացած 38 ր. 83 կ. մենք կը հասցնենք «Արարատեան» ընկերութեանը: Մեզի գիւղից գրում են. «Այստեղի բնակիչները զբաղված են թղթախաղով: Թուրք խաղում են ինչտեղ պատանու է՝ պղտու, բազարում, մի ծառի տակ, փողոցում և այլն: Խաղում են առաւօտից մինչև երեկոյ, մինչև մի արդեւաւիթ պատճառ չը պատահի: Մթերքները այս տարի շատ թանկ են: Որքանակ ցորենի պուլը, որ առաջ 60—70 կ. արժէր, այժմ 1 ր.—50 կ. է ծախվում: Այսօր, սեպտեմբերի 20-ին Թիֆլիսի Ամարային թատրոնում հայ դերասանական մշտական խումբը կը ներկայացնէ «Պէպո» կոմիդիա, հեղ. Գ. Սունդուկեանի, պ. Ազամանը կը կարդայ, իսկ օր. Սիրանուշ և օր. Աստղիկ կերպին դուէտ: Մեզ գրում են Մեզի գիւղից. «Արջին ժամանակները այստեղ մեր գիւղին անձամբ հիւանդութիւններ են երևացել: Մարմնի վրա վերքեր են յայտնվում, որոնք չուտով հիւանդին սպա նում են: Այդ վերքերը մարմնի վրա սկզբից շատ աննշան են լինում, առաջ վերքի տեղը սկսում է կամ բոր գալ, յետոյ կարծում է և մեծանում, կամ ուռչում է և կապտում: Այս հիւանդութեանը շատերը ենթարկվում են, բայց քիչերն են լաւանում: Թղթախիցը խնդրում է հայ բժիշկներին «Մշակի» մէջ յայտնել իրանց կարծիքը թէ այդ հիւանդութեան և թէ նրա առաջն առնելու միջոցների մասին: Հարկաւոր ենք համարում կրկին անգամ յայտնել, որ «Մշակի» խմբագրատանը նուիրատուութիւններ ընդունվում են միմիայն «Արարատեան» ընկերութեան համար: Գօլտոր Ա. Բարայանի անցեալ օգոստոս ամսին կարդացած հրատարակական դասախօսութիւնների մասին մեզ հաղորդում են հետևեալ մանրամասնութիւնները. «Ա. Ա. ԲԱՐԱՅԱՆԻ»-ի հատարակութիւնը մեծ համակրութիւն ցոյց տուեց հրատարակական դասախօսութիւններին: Բազմաթիւ լսողների համարեա կէտը կանայք էին: Կային և կատանի մէջ, թրքերն այն միակ ցեղն է որ հրատարակական, հատարակական կանաքը չը գիտէր ինչ է: Թէ որքան անհրաժեշտ մի բան է այդ հատարակական կենսքը յառաջադիմելու համար, ամենքին զայն կը ճանաչենք: Իրաւ է թէ Սուրբանին միասնական իշխանութիւնն այդ բանին չը նպաստէր, ինչպէս ամեն միասնակութիւն, սակայն այն ժողովուրդներն որ առողջ են, որ խորհող են, որ քաղաքակրթութեան սիրահար են, չուղտի, անասունի նման, ամբողջ կենսքը, տան և խանութի երկիւղին ներքն անցանել, իրենց իրենց առիթներ գտնել են, պատրաստել են, հնարել են, հարկաւորով հաղորդելով ի մի վայր գումարուելու, անդ, իբր մի ընտանիքի զաւակներ, ամեն ազգայիններ ուրախացել են ազգին աջակցութեանց վերա, արամբ են նորա յուզուածոց վերայ, ձեռք ձեռքի տուած են, սրտով միացել են ազգին բարեւակութեան համար աշխատելու, քրտիք և մինչև արիւն թափելու: Հայերն, իրենց ազգային տոներն ունին, և կեղեցիներն ունին, իրենց մեծանուն գրականաց տարեդարձները, իրենց թատրոններն ունին, ուր կը գնան իբր ազգ, ուրախանալ իբր ազգ, աղօթել, իբր ազգ, վերայ քաջակերել, իրատել: Այդ հանդէսներու մէջ նոր ուժ կը քաղեն, նոր ձեռնարկներու գաղափարներ կը յղանան, ապագայ գործոց հիմեր կը դրուին: Յոյն ալ պուլղարն իսկ, այդ անսպաս, անտաշ աղքն իսկ, այդ հրատարակական կենսք մ'ունի, լոկ թուրքը չը գիտեր թէ ինչ բանի կրնայ ծառայել կթէ 100—200—կամ 300 թուրք մի և նոյն վայրը գումար ված, իրենց վիճակին, իրենց բաղին մի վայր խօսակն, ճառեն, վիճաբանեն: Ո՛ր էր թէ բնութեան իրենց իբր ժամանակութիւն տրուած թերութեանց մի փոխարինութիւն գտնելն արուեստական միջոցներով: Այդ միւլթարութիւնն ալ չունեն թշուառները: Կրօնք, կառավարութիւն, բարք, սովորութիւնք, լեզու, այս ամենը միասնակ են, կարծես, թուրք տարին անկ լարիւնթոթի մը մէջ պահուել համար: Փրկարար միջոցներէն է ոչ մին կը վայելեն, ոչ լրացութիւն, ոչ գրականութիւն, ոչ հրատարակականութիւնք, ոչինչ: (Կը շարունակվի)

հողերով և այլուց 132 ր., կրկնորդ դասախօսութիւնը ձրի էր, որպէս զի հասարակ ժողովուրդին լսելու միջոց տրվի: Այդ դասախօսութեան ժամանակ լսողներին մի քանիսը իրանց մէջ հաւաքեցին 83 ր. և յանձնեցին դասախօսի անօրինութեանը: Եկամտաւորները կրկնուեցին 215 ր., որից ծախսվել է քաղաքային կրթիչ անտեսին, դասընթաց փարձ, լուսաւորութեան և այլն 20 ր., ամբիջներ, տունակներ և ծրագրիներ ստեղծել 9 ր., դասախօսութեան արտադրելու և այլն 6 ր. ընդամենը ծախս եղել է 35 ր., մնացել է դուրս արդիւնք 180 ր.: ԱՌԱՅԱՅԱՅԱՅ կարգադրած դասախօսութիւնից ստացվել է 50 ր., ծախս եղել է 7 ր.: Երկու քաղաքներից գոյացել է 223 ր. դուրս արդիւնք: Այդ գումարը դասախօսը նշանակել է հետեւեալ բարեգործութիւնների համար. ժողովրդական առողջապահական դրբեր հրատարակելու գործին 110 ր. (այդ գումարը յանձնված է «Քորձի» խմբագիր Ազգար Յովհաննիսեանին, որի մօտ նոյն նպատակի համար հաւաքուում է Ա. Բարայանի ուսումն. առողջապ. հարցերս վերնադրով գրքի արդիւնքը), Սեղրակ Մանգլիսեանի գործին՝ Տաճկաստանի ուսումնարանների վիճակը բնական և մանկավարժական գործունէութեան կենտրոնաւորելու ընտրելու 100 ր. (այս գումարը Գլխորդարանից—Արևելեան ընկերութեան միջոցով պետք է պ. Մանգլիսեանին հասնի), Արագածի ընկերացարանի համար մի քանի հարկաւոր գրքեր ձեռք բերելու 13 ր. (այս գումարը յանձնված է կարապետ քահանայ Տէր-Կրկնորինին):

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԻՒՆՍԻԱ

Մեր ընթերցողներին «Մշակի» մէջ սպված քաղաքական յօդուածներից յայտնի է, որ Վաղդինգուոնի միւնիստրութիւնը անհամբեր սպասում էր, թէ ինչպէս կը վերաբերվին քաղաքային գլխաւոր խորհրդարանները միւնիստր Թերրիի օրէնքի նախագծին կրթութեան գործի մասին:

Չը նայելով, որ խորհրդարանները աւանձին համակրութեամբ չը վերաբերվեցին այդ օրէնքին, այնու ամենայնիւ Վաղդինգուոնի միւնիստրութիւնը, ինչպէս երևում է, մտադիր չէ զիջումներ անել և կամենում է Թերրիի օրէնքը ամբողջութեամբ անցկացնել սենատի մէջ: Այդ հանգամանքը հաստատուում է նըրանով, որ Թերրի իր եռանդոտ յայտնութիւններով ցոյց է տալիս, որ օրէնքը սատարի պէտք է պաշտպանել: Միւնիստրը հաւատացնում է, որ այդ օրէնքը ամենալաւ զէնք է կղերականների դէմ պատերազմելու համար: Նա հաւատացած է, որ հանրապետական ամբողջ ժրմանիան հակադրում է, թէ կղերականների դէմ պատերազմելու համար հարկաւոր են ուղիղ, և գործնական միջոցներ:

Միւնիստրը Թերրիի ցոյց տուած եռանդը չափազանց մեծ է մանաւանդ եթէ ի նկատի առնենք, որ նա գործ ունի կղերականների, այսինքն այնպիսի հակառակորդներին հետ, որ մինչև վերջին շունչը չեն դադարում ընդդիմանալ իրանց վրա յարձակողներին: Այդ հակառակորդներին, կղերականներին ոչինչ բանով չէ կարելի վախճնել. ոչ մի միջոց, ոչ մի օրէնք նրանց վրա չէ ազդում:

Այն սարսափելի կռիւլը, որ սկսվել է և մինչև այժմ էլ շարունակվում է Բելգիայում կաթօլիկ հոգևորականութեան և կառավարութեան մէջ, ազատուցանում է, որ կղերականները իրանց թուլացած չեն համարում, երբ պետութիւնը նրանց դէմ ուղղված մի օրէնք է հրատարակում: Այդպիսի օրէնքները ընդհակառակը աւելի էլ առիթ են տալիս կղերականներին սաստկացնելու իրանց յարձակունքները պետութեան վրա:

Բելգիական նոր օրէնքը ժողովրդական կրթութեան մասին դադարեցրեց կրօնի սովորութեանը: Այդ օրէնքը ծնողներին իրաւունք

բերեց իրենց երեխաներին կրօնի դասատուութեան գործը և իրենց հոգևորականներից ժողովրդական ուսումնարանների վրա հակառակ իրաւունքը: Այս մասին «Մշակի» արտաբերին տեսութեան բաժնի մէջ մի քանի ընդարձակ յօդուածներ կային սպված, որոնց կրկնելը աւելորդ ենք համարում: Բելգիական կաթօլիկները խտուութեամբ հրամայեցին իրանց ստորադրեալներին, որ նրանք ուսումնարաններում դաս չը տան կրօն այն երեխաներին, որոնց ծնողները ցանկացել են, որ իրանց օրէնքը սովորեն կրօն: Հոգևորականութեան այն անդամներին, որոնք այդ հրամանի հակառակ շարունակում էին ուսումնարաններում կրօնի դասատուութիւնը, եպիսկոպոսները նոյնպէս էին: Այդպիսով կրօնի դասատուութիւնը դադարեցաւ բելգիական ժողովրդական ուսումնարաններում և կառավարութիւնը զեռուար դրութեան մէջ զրկեցաւ: Կառավարութիւնը վճռեց կրօնի դասատուութիւնը աշխարհականներին յանձնել, բայց կղերականները դրանց էլ արդեւեցին: Կրօնի աշխարհական ուսուցիչները կամ նոյնվում էին, կամ զրկվում էին հաղորդութենից և այլն: Պարզ երևում է, որ պետութիւնը իր հրատարակած օրէնքը չը կարողացաւ գործադրել Բելգիայում:

Նոյնանման պատերազմի համար այժմ պատրաստվում են Ֆրանսիական հոգևորականութիւնը և կղերական կառավարութիւնը: Կղերականները վճռել են այն դէպքում, եթէ սենատը ընդունէ Թերրիի օրէնքը ամեն միջոց գործ զնել, ամեն կերպ աշխատել, որ կառավարութիւնը չը կարողանայ գործադրել այդ օրէնքը և որ նա մնայ իրրեւ մեռած տառ:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Թէ՛րան, 15 օգոստոսի

Շատերը, որոնք հետաքրքրվում են Պարսկաստանի վիճակով, մեծ անհամբերութեամբ սպասում էին, թէ նորին մեծութեան Շահի վերջին տարիներում երկու անգամ Եւրոպայում արած ճանապարհորդութիւններից յետոյ, կը ինչէին չօչպիւնի վերանորոգութիւնների Պարսկաստանի մէջ: Թէ՛րանի արևելեան այդ միապետը, տնտեսով Եւրոպական պետութիւնների այժմեան բարեկարգութիւնները կատարել նրանցից շատ օրինակներ իր տէրութեան կազմակերպութիւնները փորք ի շտախ օրինաւոր և ստուր և համար: Եւ յիշեալ ակնկալութիւնները հաւանական էին զիտարադրուէին այն պատճառով, որ Պարսկաստանի վերջին թագաւորները մէջ առաջին տեղին է բռնում այժմեան Շահը, որ ազատ է նախապաշարմունքներից և բարձր ձգտումներ ունի իր ժողովրդի բարօրութեան մասին:

Բայց պետութեան մէջ զգալի, արմատական մեքանիզմները անելու համար բարձր կառավարութիւնը պէտք է հանդիպէր անհարկին արգելքների, թէ մնահաւաստ և մոլեռանդ ամբողջ կողմից, որ իւրաքանչիւր Եւրոպական ձև ունեցող հիմնարկութեանը կրօնական նշանակութիւն է տալիս— և թէ կառավարող անձնիցների կողմից, որոնք բոլորովին անպատրաստ և անընդունակ էին իրադրծելու Շահի բարի նպատակները: Նորին մեծութիւնը դեռ շատ տարի առաջ իր ծախսով ուղարկեց Ֆրանսիա թող շատ մանուկներ, որ գիտութիւն և Եւրոպական կրթութիւն ստանային, բայց ուսանողները բերեցին իրանց հետ փարիզի մտորութիւնները միայն, առանց ֆրանսիացու գիտութիւնը սովորելու:

Պարսիկներից պատրաստված մարդիկ չը գտնվելով, կառավարութիւնը հարկադրված էր ամեն մի նոր հիմնարկութեան վարչութիւնը, որ կրում էր իր վրա Եւրոպական ձև, յանձնել Եւրոպացիներին ձեռքը: Եւ այսպէս էլ եղաւ, թէ մի կողմից շատ վնասակար է, երբ մի պետութեան մէջ վերանորոգիչները լինում են օտարները...

Եւ մի ըստ միտք էր հաղորդեմ ձեռք այն փոփոխութիւնները, որ կատարվել են վերջին տարիներում, և որոնք աւելի աչքի են զարկում: Կրանցից մէկն է փոստային վարչութեան կանոնաւորելը: Պէտք է գիտենայ, թէ ինչ բան է առաջ փոստային Պարսկաստանում, որ յայտնի լինի, թէ որքան մեծ պահանջ կար նրան կանոնաւոր

ձել մէջ զնելը: Երեւակայեցէք մի կեղտոտ կառնութ, այս և այն քարվանսարայի մի անկիւնում ընկած,— դա փոստային տունն էր համարվում, ամեն կողմից թափում էին այնտեղ նամակներ, որ պէտք է տանէին չափաւրները (ձիււոր սուրհանդակներ): Անկարգութիւնը մինչև այն ստիճան էր հասնում, որ շատ անգամ թէ՛հրան տարվելու նամակը Սպահան էին տանում, իսկ Սպահան տարվելու նամակը Համասան էին տանում: Շատ անգամ չափաւրը ստիպված էր ժամերով սպասել և իր ժամանակին չը դուրս գալ, որովհետև այս ինչ նշանաւոր հայր և այն ինչ երեխի խանութնաւանները դեռ պատրաստ չէին, դեռ չէին բերել: փոստի վարչութեան վրա վստահութիւնը չուներ, վաճառականները իրանց փողերը չէին յանձնում մի քաղաքից միւս քաղաքը տանելու համար, և աւելի ապահով էին համարում ուղարկել չափաւրները և իր օրով (ձիււորներու ընկերով): Եւ այս էր պատճառը, որ Եւրոպական պետութիւնների բոլոր ներկայացուցիչները կազմեցին իրանց առանձին չափաւրները (սուրհանդակ) որովհետև պարսից փոստային չէին հաւատում, իսկ այժմ պարսից փոստային համարեալ բոլոր քաղաքների մէջ լատական կանոնաւոր կազմակերպութիւն է ստացել, որովհետև նրա կառավարիչները այլ ևս պարսիկներ չեն, այլ Եւրոպացիներ (աւստրիացիներ): Բայցի դրանից Պարսկաստանի փոստային արարքը այժմ յարակցութիւն ունի Եւրոպական բոլոր փոստային արարքների հետ, որ առաջ չը կար:

Բայց Պարսկաստանի մէջ նամակները տակաւին չափաւրներով են տարվում, որպէս էր առաջ, որովհետև հարթած ճանապարհներ չը լինելով, փոստային սայլակներ բանեցնելը անհնարին է, Այդ էր, որ առիթ տուեց հոգ տանել նաև ճանապարհների շինութեան վրա, և մի տարուց աւելի կը լինի, որ սկսվել է, և տակաւին աւարտված չէ թէ՛հրանից մինչև Թաբրիզ շաէի ճանապարհը, որ մեծ զիւրութիւն պիտի ընծայէ աւստրական յարաբերութիւնները ընդարձակվելուն:

Պարսկաստանում դեռ ևս երկաթուղի չը կայ, թէ և շատ անգամ զանազան ընկերութիւններ յանձն են առել երկաթուղիներ շինել, բայց միշտ մնացել է անպիտող: Այդ անյաղութիւնը պէտք է որոնել երկու պատճառների մէջ. առաջինը՝ անպիտան և ուսուական շահերի Պարսկաստանում միջնանց դէմ մրցութիւնը, երկրորդը՝ նոյն իսկ Պարսից կառավարութեան կապակածանքը: Առաջինի մասին այսպէս կատեմ, որ եթէ այսօր, կամ որ և իցէ ժամանակ Պարսկաստանում ձեռնարկութիւն լինի երկաթուղու շինութեան նորա շինողները կը լինեն կամ անգլիացիք, կամ Անգլիացու կազմված մի ընկերութիւն: Այս դէպքում ուսաց պոլիտիկան պիտի աշխատէ անպատճառ խափանել նրանց գործը: Իսկ պարսից կառավարութեան կապակած այն կողմից է, որ ամեն մի ընկերութիւն, որ կամենում է երկաթուղի շինել, պահանջում է կառավարութիւնից երաշխաւորութիւն, որ ապահովացրած լինէր այս և այն արդիւնքներ գաւառի կեանքում, մարտատան կամ տէրութեան այլ հատկանքի աղբիւրներով: Յանձնելով իր երկիրները եկամտաւոր և իր հասցիները Եւրոպացիներին ձեռքը, կառավարութիւնը վախենում է, որ Պարսկաստանում մի և նոյնը կը պատահի, ինչ որ լինում է այժմ Եգիպտոսում կամ Տաճկաստանում: Եւ այդ պատճառով կառավարութիւնը աւելի բարեւոք է համարում իր երկիրը թողնել առանց երկաթուղիների, քան Եւրոպական պետութիւնների անյապ շահախորժեան ստացալ զարձնել:

Այսուամենայնիւ, լսում ենք, որ մի մասնաւոր անձն, պ. Ալին անունով, Ֆրանսիայում մի ընկերութիւն կազմելով, զիտարութիւն ունի թէ՛հրանից մինչև Ռաշտ մի երկաթուղու գիծ տանել, և ընկերութեան ներկայացուցիչը՝ պ. Քէթիլեան (ազգով հայ) այժմ գտնվում է թէ՛հրանում: Վերջին տարիներում կառավարված բարեկարգութիւնի մէջ ոչ սակաւ ուշադրութեան արժանի է ոտիկանութեան նոր կազմակերպութիւնը, որ մտցրած է թէ՛հրանում, Թաբրիզում և հեռագիծէ բոլոր քաղաքներում տարածելու զիտարութիւն կայ: Նոր ոտիկանութեան վարչութեան կառավարիչները բոլոր Եւրոպացիներ (աւստրիացիներ) են: Կարծում էր, թէ ժողովուրդը գիտարութեամբ կընդունէ այս նոր փոփոխութիւնը, բայց որպէս երևում է, ժողովուրդը շատ գոռ է, որովհետև այժմ նրա կողքը և կեանքը աւելի սպառնութեան մէջ են գտնվում, քան թէ առաջուց անկարգ ոտիկանութեան ժամանակ, որ ինքը աւազակների և գողերի հետ ընկեր էր: Միայն գիտականները, միակ հակառակորդներն են մի օր և և երբ, որովհետև ոտիկանական այս նոր կազմակերպութիւնը սաստիկ վնասում է նըրանց շահերին: Լսում ենք, որ Թաբրիզի երկու գլխաւոր մուշտէլիները, չը կարողանալով յայտնի

կերպով հակառակել, ճարճատեալ թողել են այս քաղաքը և ուխտագնացութեան պատրուակով դիմել են դէպի Մեքքայ:

Վերջին ժամանակներում պարսից կառավարութիւնը ուշադրութիւն դարձրեց և իր զորքերի դրութիւնը բարեօրէնում վրա, զէնքերի հին տեսակները կարելի եղածին չափ փոխել տալով, և զինուորներին նոր մարզական եղանակով կրթելով: Մինչև այսօր պարսից զինուորների մարզիչները էին զանազան բախտակնդիր ամբիջները, որոնք Եւրոպայից, գլխաւորապէս Ֆրանսիայից, այս կողմերս էին գալիս: Բայց անցեալ տարի Շահը յատկապէս իր զինուորները կրթելու համար Աւստրիայից բերել տուեց շատ ամբիջներ, որոնք այժմ գտնվում են թէ՛հրանում: Մի երկրի մէջ վերանորոգութիւններ անելու համար ամենից առաջ պէտք է լաւ կազմակերպված զինուորական ուժ, մասնաւոր Պարսկաստանի նման մի երկրում, ուր ամեն մի փոփոխութեան մէջ թէ՛ մոլեռանդ ամբողջ և թէ՛ հոգևորականութիւնը կարող են մեծ արդիւնքներ յարուցանել:

Պարսկաստանի վերջին նորութիւնների մէջ չէ կարելի չը յիշել նոր, Եւրոպական ձևով կառված զիւրեղիկ դրամները, թէ և փոքր քանակութեամբ և շատ տարածված չեն, բայց եթէ շարունակվի, յոյս կայ, որ վաճառականները կազատվեն հին կուսնից իրից, որոնք չը վարչութեան մէջ ամեն որ մի նոր արժէք էին ստանում, և մի քաղաքում կառված կուսնը միւս քաղաքում չէր ընդունվում, որովհետև իւրաքանչիւր թէ՛ կռիւ և թէ՛ արժաթի յատկութեան մէջ մեծ զանազանութիւն էր: Այսուհետև գոնէ կարելի է միատեսակ դրամներ տեսնել:

Այս տարի սաստիկ երաշտութեան պատճառով Պարսկաստանի մի քանի գաւառներում յայտնվել է հացի թմաղութիւն, բայց սով դեռ ևս ոչ մի տեղ չէ տեսնվում:

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՍԱՐԱԷՎՈ, 16/29 սեպտեմբերի: Գլխաւոր հրամանատարն առաջարկեց պատերազմական միւնիստրին, որ նա դուրսող զօրքերից 9 հեռակ բատալիոններ, 1 հրացանաձիգ բատալիոն և երկու ամբողջ բատալիոններ զինված պահէ:

Ս. ՊԵՏԵՐՈՎԻՉԻ, 17 սեպտեմբերի: Պետական բանկի 50% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր., երկրորդ 93 ր. 87 կ., երրորդ 93 ր. 62 1/2 կ., չորրորդ 93 ր. 50 կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 232 ր., երկրորդ 227 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 62 կ., երկրորդ 91 ր. 62 կ., ոսկի 7 ր. 87 կ.: Ռուսաց մի բուքլ Լոնդոնի վրա արժէ 25,03 պէնս: Տրամադրութիւնն աւելի լաւ է:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԷՐԶՐՈՒՄԻՑ հաղորդում են 15-ին սեպտեմբերի գերմանական «Wiener Tagblatt» լրագրին, որ քրիզերի ապտամբութիւնը Հայաստանում հասնել է ծայրայեղ աստիճանի: Ապտամբութեան առաջնորդում է հռչակաւոր չէ՛յն Արդուլան: Մօտուրից մինչև Կիարեք քիւր բոլոր ճանապարհները կարված են չէ՛յնի գոնդերով: Այս օրերս սպասում են Էրզրումում նոր հրամանատար Սալին փաշային, որ նշանակված է պաշտօնակ եղած Խոյայիլ փաշայի տեղ:

Այսօր «Միջազգային ընկերութիւնից» հեռագիրներ չը ստացանք և տպում ենք այս համարում երէկվանից մնացած մի քանի հեռագիրներ:

Ընթերցողի ուշադրութիւն կը դարձնում «Մշակի» ներկայ համարում տպված Կ. Պոսից ստացած նամակի սկզբի վրա: Մենք այդ նամակը բանախրական բովանդակ մէջ ենք տպում մի կողմից նրա հետաքրքիր նիւթի, և միւս կողմից նրա ընդարձակութեան պատճառով:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՔՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՍԱԼԻՑԵԼԵԱՆ ԱՏԱՄԻ ԲԺՅԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ ԱՏԱՄ-ՆԱՅՈՅԺ ԲԺԻԿ Լ. Ի. ԷՊԵԼՊԻՅԵՍԻ ԹՅՂ ԵՆ ԱՆՈՎ ԿՈՒՄԻՏԵՍԻ ԲԻՇՎԱԿԱՆ ՖԵԿՈՒՆԵՏԻՑ: ԵՂ միջոցները մեծ գործարարությունն են գտել և առաջարկվում են իբրև ԱՄԵՆԱԼԱԻ առողջապահական ՄԻՋՈՑՆԵՐ բերանի և առամների համար: Կարելի է ԱՏԱՄՆԵՐԸ պահպանել ՓՕՇԻՆՆԵԼՈՒՑ, սառեցնում են ԼՕՐՁՈՒՆԻԻ ԲԵՐԸ և վատ ՀՈՏԻ առաջն են առնում:

Առամնաբոյժ բժիշկ Ե. Ի. Եղեղեյովի ԳԼԽԵԼՈՐ ՊԵՆՏՍԵՐ գտնվում է ՄՕՍԿՎԱՅՈՒՄ, ԿՈՒՑՆԵՑԿԻ ԿԵՄՈՒՐՁ, ՍՕԿՈԼՕՎԻ տանը: ԹԻՖԼԻՍՈՒՄ կարելի է գտնել Ե. Մ. ՅՈՒՐԻՆՕՎԻ ԿՈՎԿԱՍԵՆ և անդրկովկասեան պետաւոր ՊԵՆՏՍՈՒՄ: Ծախողների ՆՇԵՆՆԵԼՈՐ ՕԳՁՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ:

ՉԻԹԱՅԻՆ ՊԱՏԻՃՆԵՐ

ՆՕՐՎԵԳԻԵՅԻ ՄԵՔԵՆԾ ԶԻԹԻՑ, որ պատրաստված է Մօսկվայի դեղագործ:

ԳԻՐՇՅԵԼԴՏԻՑ

Գիւջի ֆրանսիական յայտնի պատիճների անհամեմատ թանգ գները գրգեցին ինձ պարսպել նրանց արդիւնազորութեամբ և որովհետև պատիճների պատրաստելը զարմնիք է և նրանք իրանց մէջ ոչինչ չեն պարունակում, բացի մաքուր Չիլիից, եւ առաջարկում եմ իմ շատ լաւ պատրաստված պատիճները ՖԻՆՆԱՆԿԱՆ (ԳԻԹՅԵ) ՊԵՏԻՃՆԵՐԻՑ 40% էժամ:

Յոյս ունեմ, որ ուսու բժիշկները և հասարակութիւնը խելացի կերպով կը վերաբերվեն դէպի իմ աշխատանքը, որովհետև նորա առիթ չունեն ուսաց փողերով պահպանել ԱՐՏԱՆՏԱՆՍԵՆՆԵՆ ԱՐԻԻՆՆԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ:

Ծախելու տեղերը. Ռուսաստանի բոլոր դեղատոմսները և տեղական պահեստները: Գլխաւոր պահեստները. Մօսկվայում, Լուբեանսկի դեղատուն Եւ. Ի. Գիրշեյդտի և Բ. Կեօլեր և ընկ. Նիկոլսկիի վրա: Թիֆլիսում՝ Յուրիսովի և Բուսուովի դեղատուն:

10—25

Մեր Ազգային գործերի Մեծապատիւ տեսչներին և նոյա օգնականներին

«Ուսումնային լեզուի» վերնագրով Այրենարանի չորրորդ տպագրութիւնն սխալուց առաջ ուղարկեմ իմանալ ձեր նկատողութիւնները այդ գրքի մասին: Եթէ կարեւոր համարէք ինչ ինչ փոփոխութիւններ կեցնարի, յաւելուածներ և յարաւումներ անել, եւ յօժարութեամբ կը կատարեմ առանց դիպչելու բուն սկզբունքին:

Ս. յ. զիրքն է ընդունուած մեր ազգային գլխաւոր գործընտրումը՝ Քիչիլիսի ներսիսեան և Գայեանեան գործընտրումը. նրանայ թեմական գարնանցում, Ալեքսանդրապոլու տարաց և օրիորդաց գործընտրումը, Գարաբաղու Հոգևոր սեմինարիայում և թեմի գործընտրումը: Ինձ յայտնի չէ միայն միւս մանր գործընտրեց որոնցում է ընդունուած: Սակայն եւ այս ընդունելութիւնից ազատութեամբ շահուելու բաղձանք չունեմ, իմ միակ շահս կը լինէր այն, որ դա իւր եղանակով բովանդակութեամբ և զնովը համապատասխան այդ ընդունելութեանը, իսկ այդ վեր է միակ մի հոգու ուժից, պէտք են բարոյապէս և ընկերայնաբար օգնողներ, ահա այդ օգնութիւնն եմ եւս խնայարհար խնդրում ձեզանից: Իմ հասցէն—Նուշի, Գագարու Ազգայնացին:

3—3

Վաճառվում է Քիչիլիսի բոլոր գրաւածուանոցներում Русское Слово—ԳԱՍԱԿԻԿՔ ՌՈՒՍՆԵՐԸ ԼԵՁՈՒԻ, աշխատատեղութիւն Կամար Ե Եր—Ե աւթեանցի, երկրորդ տպագրութիւն: Գինն է 40 կոպէկ: ՃԱՆԱՊԱՐՀԻ ԵՄԱՍԸ առնողների վրա է: Գուճարով առնողներին ՄԵՐ ՁԻՁՈՒՄՆ կը լինի, եթէ դիմեն ուղղակի աշխատատեղին այս հասցէով:

Тифлисе. Камсару Теръ—Давидянцъ. Въ магазинѣ Бр. Абовьянцъ. На Михайловскомъ мосту. 3—3

ՄԱՍԿՎԱՅԻ Ե ԵՐԵՎԱՆԻՍԻ ԳՈՒՐՁԻՆԱՆՈՒՄՆԱԿԸ քարվանսարան, որ ունի 116 ԳՈՒՐՁԻՆ, 2 մեծ ՄԱՍԿՎԱՅԻ պահեստի համար, 2 ԱՐՈՒՍԵՆՆԻ, 2 ՍԵՆԵԱԿՆԻ խոհանոցով և մեծ ԱՍԿՎԱՅԻ մշտական ջրով: Սորա հետ ունի նմանապէս ԳԱՍԱԿԻ ՏԵՂ 4000 քառակուսի սաճէն: Յանկացողները ՊԱՅՄԱՆՆԵՐԻ մասին կարող են գիտել Պ. ՔԱՂՎԱՍՍԻ ԽՈՍՐՈՎՆԱՆՆԻ, Քիչիլիսում, Գանդիկայայ փողոցի վրա, ՍԵՓԱՅԱՆ ՏԱՆԸ:

10—20 (2)

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԻՃ

Տարրական Ուսումնարան

Աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը և քննութիւնները կը սկսվեն օգոստոսի 21-ին, իսկ ուսուցիչ կը սկսվեն սեպտեմբերի 5-ին 1879 թ:

Մանկական Պարտեզում ընդունվում են երկու սեռի մանուկներ 4-ից մինչև 7 տարեկան հասակը, իսկ ուսումնարանում ընդունվում են 7-ից մինչև 14 տարեկան հասակը:

Ուսման ընթացքը այնպէս է յարմարեցրած, որ Ուսումնարանում թէ՛ աղջիկ և թէ՛ տղայ աւարտողները կարող են գիմնազիական 1 և 2-րորդ դասատուները մանկ:

Սոյոյակի, Վերամիմոսկայայ փողոց, Խչու Ամատունու տուն, № 11. 4—4

Խնդրում եմ ՎՐԱՍԱՆԻ ՆԻ ԻՄԵՐԵԹԻ ԹԵՄԻ հայոց հոգևոր ուսումնարանների ՎԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ Հաղորդել ինձ թէ ինչ առարկաների ՌՈՒՍՈՒՅԻ ԿԱՐՏՈՒԹԻՒՆ ունեն, ուղարկելով մի և նոյն ժամանակ իրանց յանձնված ՌՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՇՏԱՍԸ:

Թեմական Վերատեսչ ԳԵՈՐԳ. ԲԱՍԻՆԻՎԱՐՅԱՆՑ: 10—10

Քիչիլիսում էժամ ծախվում է մի ՏՈՒՆ Պրիկազի պարտքով, Կուկիլայում, Ալեքսանդրովսկայայ փողոց, տուն № 63.

4—5

ԹԻՖԼԻՍ 1879

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20		Տ Ե Ղ Ե Կ Ա Յ Ո Յ Ց		Փ Օ Ս Տ		ԲԺՇԿԱՆՈՑ		ՄՇԱԿԻ ՊԱՏԱՍԻՆՆԵՐ	
Թիֆլիսի վաճառուներ (Սեպտեմբերի 19-ին)	8	15							
Ոսկին (պողոնակերպը)	1470								
Հին 84 սր. մ. արծ. 1000 մ	1245								
Հին 20 կ. 72 սր. 1000 մ									
Վերջինի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 մ	238								
Երկրորդ 5% վերջինի 237 մ									
Մարտի կուրսը 266—	100								
Լճագծի կուրսը Օղեսայի վրա	9	55							
Վենայի կուրսը արժէ 121 գր.	100								
Գաւթի բարձր	4	80							
Աւարական բանկի ակցիան 200 մ.	310								
Փոթի թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.									
Շաբաթը բրոցիու	7	30							
միւս տեսակը	7	75							
չաբար աւար.	5	75							
տրանսպոր.	5	10							
մաքուր վճառած	10								
Բամբակը նրանու Ամերիկայի սերմից	8								
Միւս տեսակը հին սերմից	7	40							
Բուրդը թուշի.	7	50							
Թարաքամի.	4								
Ալիւրը Շորաքալու.	2	20							
Նրանի.									
Գարին	1	40							
Մամր բնածաբայի (steap.)	12	40							
Մետաքսը Նուսիպայ.	180								
Կահու թուշի.	140								
Կոկոնը Նուսիպայ (բոմ.)	50								
Ֆրիզոնը (չաբ) Ազուլայ	65								
Վօֆէն մոկոի.	26								
Վրանի	22								
Մանուկնիցն	18								